# Արմավիրի մարզ Ջրարբիի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

# Դասվարական մեթոդմիավորման ծրագիր

2022-2023ուսումնական տարի

Դասվար՝ Ս.Երեմյան

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ
20 - 202 ուսումնական տարի
Մասնախմբի ղեկավար՝

# ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել մայրենիի, մաթեմատիկայի , ես և շրջակա աշխարհի դասավանդումը դպրոցում, կիրառելով դասավանդման ժամանակակից նորարարական մոտեցումներ:

Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ավելի մեծ ուշադրություն դարձնել աշակերտների կիրառական և վերլուծական կարողությունների զարգացմանը ի հակադրություն պարզապես փաստային գիտելիքի մեխանիկական կուտակման և վերարտադրման, լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ- աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի և խմբային աշխատանքների կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման և մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ուսումնասիրել կրթության վերաբերյալ համացանցում (օրինակ, lib.armedu.am կայքում) տեղադրված համապատասխան նյութերը և գործնականորեն կիրառել մանկավարժական մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով :

Առարկայական մասնագետների կարևորագույն խնդիրներից մեկը համարել՝ ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր ընդունակությունների և հնարավորությունների չափով ակտիվ մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Դպրոցականների միջազգային և առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Ժամկետ | Նշումներ կատարել ու մասին |
|---|---|---|---|---|
| 1 | Հրավիրել մեթոդմիավորման նիստեր, ներկայացնել հաշվետվություններ | Ղեկավար | Ամիսը մեկ | |
| 2 | Կատարել 2022-2023 ուստարվա պետական ծրագրերի և չափորոշիչների ուսումնասիրում և քննարկում | Մ/մ անդամներ | Օգոստոսի վերջին | |
| 3 | Քննարկել մեթոդմիավորման աշխատանքային ծրագիրը և ներկայացնել տնօրենի հաստատման:Անցկացնել էլեկտրոնային մասյան | Մ/մ անդամներ ,ղեկավար | Օգոստոսի վերջ | |
| 4 | Պարբերաբար քննարկել «Նախաշավիղում» լույս տեսնող մեթոդական նյութերը | Մ/մ անդամներ | Տարվա ընթացքում | |
| 5 | Քննարկել ծրագրային նյութերի թեմատիկ պլանները և ներկայացնել տնօրենի հաստատման:Անցկացնել էլ. մասյան | Մ/մ անդամներ | Սեպտեմբեր | |
| 6 | Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ: Ծնողներին մասնակից դարձնել արտադասարանական արտադպրոցական աշխատանքներին: | Դասվարներ | Տարվա ընթ. | |
| 7 | Անցկացնել անհատական կոնսուլտացիաներ սկսնակ ուսուցիչների հետ՝ դասի արդյունավետության բարձրացման նպատակով: | Մ/մ ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 8 | Անցկացնել անհատական խորհրդատվություններ ուսուցիչների և ծնողների հետ:Հիգիենայի պահպանման կանոնները թագավարակի դեմ: | Դասվարներ | Տարվա ընթացքում | |
| 9 | Անցկացնել քննարկումներ կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների և ուսուցիչների հետ | Դասվարներ | Տարվա ընթացքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ներառական կրթության կարիք ունեցող աշակերտների համար կազմել ԱՈՒՊ ծրագիր՝ հաշվի առնելով նախորդ տարիների գնահատականները | 2-4-րդ դաս | Սեպտեմբեր-հոկտեմբեր | |
| 11 | Նոր դասագրքերի քննարկում | | Սեպտեմբեր-հոկտեմբեր | |
| 12 | Կազմակերպել հետաքրքիր աշխատանքների ցուցահանդես | 2-4-րդ դաս | Տարվա ընթացքում | |
| 13 | Լավագույն դասարանական անկյունի կահավորման,պատի թերթի լույս ընծայման մրցույթներ (Ամանորին,ուսուցչի տոնին, մարտի 8-ին … նվիրված): | 1-4-րդ դաս. | Տարվա ընթացքում | |
| 14 | Ուսումնասիրել և քննարկել տարբեր առարկաների ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում և տառուսուցումը 1 –ին դասարանում: | Մ/մ ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 15 | Կատարել մայրենիի ուսուցման արդյունավետության ուսումնասիրում 1- 4-րդ դասարաններում: | Մ/մ ղ ե կ ավ ար | Հոկտեմբեր | |
| 16 | Կատարել մաթեմատիկայի արդյունավետ ուսուցման ուսումնասիրում 1- 4-րդ դասարաններում: | Մ/մ ղեկավար | Մարտ | |
| 17 | Աշխատանք տանել «Տեխնոլոգիա» առարկայի դասի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Կատարել մեթոդական քննարկումներ: | Մ/մ Ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 18 | Աշխատանք տանել, որ դասավանդման նոր մեթոդներ և ձևերը կիրառվեն բոլոր առարկաների դասաժամերին: | Մ/մ ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 19 | Աշխատանք տանել սկսնակ ուսուցիչների հետ նրանց մեթոդամանկավարժական վարպետությունը բարձրացնելու նպատակով: | Մ/մ ղեկավար | Տարվա ընթացքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ուսումնասիրել նոր մեթոդների կիրառումը դասապրոցեսում: | Մ/մ ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 21 | Կատարել դասալսումներ և քննարկել դրանք: | Մ/մ ղեկավար, դասվարներ | Տարվա ընթացքում | |
| 22 | Աշխատանք տանել, որ բոլոր ուսուցիչները հասու լինեն մեթոդական նոր գրականությանը: | Մ/մ ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 23 | Ուսումնասիրել կարդալու տեխնիկան 1-4-րդ դասարաններում: | Մ/մ ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 24 | Պատրաստել դիդակտիկ նոր նյութեր մայրենի և մաթեմատիկա առարկաներից: | Դասվարներ | Տարվա ընթացքում | |
| 25 | Առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերլուծություն | Դասվարներ | Դեկտեմբեր | |
| 26 | Թեմատիկ գրավոր աշխատանքների միջոցով պարզել առարկաների վիճակը և արդյունքները քննարկել մեթոդմիավորման նիստերում: | Մ/մ ղեկավար | Երկու ամիսը մեկ | |
| 27 | Պատրաստել նոր ցուցավահանակներ, կարգի բերել եղածները և աշխատանք տանել դասարանների կահավորման, արդիականացման համար: | Դասվարներ | Տ/ընթ. | |
| 28 | Դասարաններում կազմակերպել ծաղիկների աճեցման աշխատանքներ՝ դասարաններն ավելի գեղեցկացնելու նպատակով: | Դասվարներ | Տ/ընթ. | |
| 29 | Երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքների վերլուծություն | | Մայիս | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Կազմակերպել էքսկուրսիաներ և արշավներ Հայաստանի տեսարժան վայրեր, պատմաճարտարապետական կոթողներ և թանգարաններ: | Դասվարներ | Տ/ընթ. | |
| 31 | Կազմակերպել խորհրդատվություններ քննաշրջանի ընթացքում | 4-րդ դասարանի դասվարներ | Հունիս | |
| 32 | Քննարկել որակավորման ստուգման արդյունքները | Դասվարներ | Հունիս | |
| 33 | Քննարկել ուսպլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հարցը և առաջարկություններ ներկայացնել տնօրենին | Մ/մ ղեկավար | Հունիս | |
| 34 | 2022-2023 ուստարվա արդյունքների ամփոփում: | Մ/մ ղեկավար | Հունիս | |